

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«16» հուլիսի 2020թ.

No 2322 – Լ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԽՏՈՐՈՇՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՐՁԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ
ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԴՐԱՆՑ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ, ԳՆԱՀԱՏՈՂ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի հունիսի
2-ի թիվ 104 որոշման 2-րդ կետը, 8-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերը և ղեկավարվելով
Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ
որոշման հավելվածով հաստատված Առողջապահության նախարարության
կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով
պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով լաբորատոր հետազոտությունների
իրականացման տեխնիկական հազեցվածության, մասնագետների թվի, որակավորման,
ինչպես նաև կենսանվտանգության չափորոշիչները և պահանջները՝ համաձայն հավելված
1-ի:

2) Հայաստանի Հանրապետության առանձին լաբորատորիաներում պոլիմերազային
շղթայական ռեակցիայի մեթոդով լաբորատոր հետազոտությունների իրականացման
տեխնիկական հազեցվածության, մասնագետների թվի, որակավորման, ինչպես նաև

կենսանվտանգության համապատասխանության գնահատման հարցաշարը՝ համաձայն հավելված 2-ի:

3) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով լաբորատոր հետազոտությունների իրականացման տեխնիկական հագեցվածության, մասնագետների թվի, որակավորման, ինչպես նաև կենսանվտանգության՝ սահմանված պահանջներին ու չափորոշիչներին համապատասխանությունը գնահատող մասնագիտական խմբի կազմը՝ համաձայն հավելված 3-ի:

4) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդով լաբորատոր հետազոտությունների իրականացման տեխնիկական հագեցվածության, մասնագետների թվի, որակավորման, ինչպես նաև կենսանվտանգության՝ սահմանված պահանջներին ու չափորոշիչներին համապատասխանության գնահատման գործընթացը՝ համաձայն հավելված 4-ի:

2. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ,
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ՇԵՆՔԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սենքը պետք է մեկուսացված լինի այլ սենքերից և ունենա իրարից տարանջատված հետևյալ աշխատանքային գոտիները՝
 - 1) նմուշների ընդունման/գրանցման և նախապատրաստման (առաջնային մշակման) գոտի,
 - 2) նուկլեինաթթուների (ՌՆԹ/ԴՆԹ) էքստրակցիայի գոտի,
 - 3) ռեակցիոն խառնուրդների պատրաստման գոտի,
 - 4) պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) իրականացման գոտիներ (կարելի է համատեղել),
 - 5) էլեկտրոֆորեզի օգնությամբ դետեկցիայի իրականացման գոտի (էքստրակցիայի և ռեակցիոն խառնուրդների պատրաստման հատվածից՝ առավելագույն մեկուսացմամբ) (20-25 մ²):
2. Գոտիներն անհրաժեշտ է պլանավորել այնպես, որ ապահովվի վարակիչ նյութի պատշաճ տեղաշարժման հոսքագիծը, ընդ որում յուրաքանչյուր գոտի պետք է ունենա՝
 - 1) ավտոմատ կաթոցիչների, ծայրակալների՝ սեփական հավաքածու,
 - 2) փորձանոթներ և պլաստիկ պարագաներ,
 - 3) թափոնների համար նախատեսված, տեսակավորված և մակնշված տարաներ, ժամանակավոր պահման վայր, գրանցամատյաններ,
 - 4) մաքրման համար նախատեսված և մակնշված գույք և պարագաներ,
 - 5) անհատական պաշտպանության միջոցներ:
3. Սենքի յուրաքանչյուր սենյակ ապահովվում է ջրամատակարարման, անխափան էլեկտրական սնուցման աղբյուրներով, ջեռուցման, առանձին օդափոխության և հակահրդեհային համակարգերով:

2. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

4. ՊՇՌ հետազոտությունների իրականացման համար կիրառվող սարքեր և սարքավորումներն են՝
 - 1) կենսաանվտանգության պահարան՝ II դասի
 - 2) կենսաանվտանգության պահարան/ներ՝ I դասի

- 3) ցենտրիֆուգ-վորտեքս (2-3 հատ)
- 4) միկրոցենտրիֆուգ 16000 g 1,5մլ փորձանոթների համար
- 5) թերմոբլոկ՝ 25-100°C. ջերմաստիճանային դիապազոնով 1,5մլ փորձանոթների համար (1հատ)
- 6) վակուումային արտածծիչ (1հատ)
- 7) տարբեր ծավալի ավտոմատ կաթոցիչների հավաքածուներ (3-4 հավաքածու)
- 8) տարբեր ծավալի ծայրակալների հավաքածուներ՝ ֆիլտրով (ըստ հետազոտությունների քանակի)
- 9) շտատիվներ փորձանոթների համար (4 հատ տարբեր տարողության)
- 10) սառնարաններ (+2 ից +8°C)
- 11) սառցարաններ (- 20°C և/կամ - 70°C)
- 12) ՊՇՌ- ամպլիֆիկացնող սարք՝ դետեկտոր, միացված համակարգչին
- 13) էլեկտրոֆորեզ (եթե կիրառելի է)

3. ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ ԵՎ ՈՐԱԿՎՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

5. ՊՇՌ հետազոտությունների իրականացման համար պահանջվող մասնագետներն են՝
 - 1) բարձրագույն կրթություն (բժշկական կամ կենսաբանական), բժշկական լաբորատոր ախտորոշիչ մասնագիտացում ունեցող մասնագետ՝ ՊՇՌ հետազոտությունների փորձի և/կամ տեսական-գործնական վերապատրաստումների հավաստմամբ,
 - 2) միջին բուժաշխատող՝ լաբորանտի կրթությամբ և ՊՇՌ հետազոտությունների վերաբերյալ համապատասխան վերապատրաստման հավաստմամբ,
 - 3) կրտսեր բուժաշխատող:
6. Մասնագետների պահանջվող հաստիքաքանակը որոշվում է գնահատող մասնագիտական խմբի կողմից՝ ելնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունից, տվյալ գործունեության տեսակի համար սահմանված աշխատաժամերի քանակից, հետազոտությունների տեսականուց, քանակից, լաբորատորիայի տեխնիկական հագեցվածությունից, կատարողի փորձառությունից և այլն:

4. ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Կենսանվտանգության պատշաճ համակարգի վերաբերյալ պահանջները սահմանվել են Առողջապահության նախարարության 2020 թվականի ապրիլի 27-ի N 1361-Լ հրամանում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ
ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ,
ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության/Լաբորատորիայի անվանում	
Հասցե	
Հեռախոսահամար/Ֆաքս	
Էլեկտրոնային հասցե	
Կազմակերպության/Լաբորատորիայի ղեկավարի անուն, ազգանուն/կոնտակտային տվյալներ	
Գնահատման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Հարցվողի/հարցվողների անուն, ազգանունը, պաշտոնը, մասնագիտացումը, կոնտակտային տվյալները	
<i>Նշել լաբորատորիայի գործունեության տեսակներն՝ ընտրելով ստորև նշվածները և լրացնել՝ ըստ անհրաժեշտության.</i>	
Իմունաբանական մեթոդի կիրառում	
Պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդի կիրառում	

2. Մոդուլ 1՝ Կազմակերպում և կառավարում

*(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4
բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)*

ՀՀ	Հարցման բաղադրիչ	Փաստ աթղթի	Չափմ ան միավ	Նշումներ
----	------------------	---------------	--------------------	----------

		առկայո ւթյուն	որ (բալ)	
1. Ժամաքանակ				
1	Շաբաթական քանի՞ օր և քանի՞ ժամ է աշխատում լաբորատորիան		X	
2	Արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայությունների օրերի և ժամերի քանակը (եթե կիրառելի է)		X	
2. Արտաքին միջավայրի հետ հաղորդակցում				
Արդյո՞ք լաբորատորիան ունի՝				
3	Հեռախոս/ֆաքս			
4	Ինտերնետի հասանելիությամբ համակարգիչ			
5	Արդյո՞ք հաճախորդին հասանելի է հետազոտության գնի և պատասխանի տրման ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը		○	
6	Արդյո՞ք հաճախորդը ժամանակին տեղեկացվում է պատասխանի ուշացման և պատճառի մասին, եթե առաջացել են խնդիրներ			
3. Կազմակերպական կառուցվածքը և տեղեկատվության փոխանակումը լաբորատորիայում				
7	Արդյո՞ք կազմվում են արձանագրություններ՝ աշխատաժողովների, հանդիպումների վերաբերյալ		○	
	Նկարագրել լաբորատորիայում տեղեկատվության փոխանակման միջոցները՝ հայտարարությունների տարածում, ներքին ցանց, էլեկտրոնային փոստ և այլն			
4. Վերահսկողություն/հավատարմագրում				
8	Արդյո՞ք լաբորատորիան ենթարկվել է արտաքին գնահատման/աուդիտի արտաքին կազմակերպության կողմից՝ վերջին 2 տարվա ընթացքում			
9	Արդյո՞ք լաբորատորիան ունի սերտիֆիկացիա/հավատարմագրում		○	
5. Կենսաբանական անվտանգություն				

10	Առկա՞ է արդյոք կենսանվտանգության ձեռնարկ	○		
11	«Այո» կամ «Մասամբ» պատասխանի դեպքում ներառվա՞ծ են արդյոք հետևյալ հարցերը՝			
1)	Անհատական պաշտպանության միջոցներ			
2)	Վարակազերծում (դեզինֆեկցիա) և մանրէազերծում (ստերիլիզացիա)			
3)	Թափոնների հեռացում			
4)	Հասանելիության սահմանափակում			
5)	Կենսանվտանգության ապահովման սարքավորումներ			
6)	Արտակարգ և անկանխատեսելի իրավիճակներում գործողությունների ընթացակարգեր (օրինակ՝ բաղարկման դեպքում և այլն)			
7)	Տեսանելի են արդյոք անմիջապես լաբորատորիայի աշխատանքային հատվածում նյութերի կամ սարքերի անվտանգության հավաստագրերը	○		

3. Մոդուլ 2՝ Նմուշների հավաքում, տեղափոխում, վարման գործելակարգ

(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)

1. Նմուշների հավաքում				
1	Գոյություն ունե՞ն արդյոք հաճախորդների համար նմուշների հավաքագրման նախապատրաստմանն ուղղորդող գրավոր հրահանգներ	○		
2	Փաստաթղթավորվա՞ծ են արդյոք նմուշների հավաքման ընթացակարգերը, հասանելի՞ են արդյոք այն աշխատակիցներին, ում դրանք հարկավոր են	○		
2. Նմուշների վարում				

3	Լաբորատորիայից դուրս նմուշառված նմուշներ ստանալու դեպքում, առնչվում է արդյոք լաբորատորիան հետևյալ խնդիրներին (1. Երբեք; 2. Երբեմն; 3. Կանոնավոր; 4. Կիրառելի չէ)			
1)	Ուղեգրի բացակայություն			
2)	Թերի լրացված ուղեգիր			
3)	Նմուշի սխալ նույնականացում			
4)	Հաճախորդի սխալ նույնականացում			
5)	Անհամապատասխան տարա			
6)	Նմուշի անբավարար քանակ			
7)	Անհամապատասխան հավելումներով տարա			
8)	Անհամապատասխան փաթեթավորում			
9)	Փոխադրման ջերմային անհամապատասխան պայմաններ			
10)	Նմուշի ժամանակավրեպություն (անալիտի կայունության ժամանակահատվածի գերազանցում՝ նմուշի ստացումից մինչև նմուշի ընդունում՝ լաբորատորիա)			
4	Առկա՞ են արդյոք առաջնային նմուշների ընդունման և մերժման չափանիշներ (ներառյալ՝ պահանջներին չհամապատասխանող նմուշների վերապահումով ընդունման դեպքում)	○		
5	Առկա են արդյոք առաջնային նմուշների պահպանման համար պատշաճ պայմաններ՝ անմիջապես հետազոտությունը չիրականացնելու դեպքում			
6	Առկա են արդյոք առաջնային նմուշների պահպանման համար պատշաճ պայմաններ՝ հետագայում հետազոտության կրկնման և/կամ այլ հետազոտություններ իրականացնելու դեպքում			
3. Նմուշների տեղափոխում/վերուղեգրում				
7	Լաբորատորիան ստանու՞մ է այլ լաբորատորիաներից նմուշներ			

8	Լաբորատորիան ուղեգրում է իր նմուշներն այլ լաբորատորիաներ			
9	<i>«Այո» կամ «Մասամբ» պատասխանի դեպքում նշել, թե ի՞նչ նմուշներ, ո՞ր լաբորատորիաներ և ո՞ր դեպքերում են ուղեգրվում.</i>			
1)	Լաբորատորիան ու՞նի արդյոք նմուշի փոխադրման համար պատշաճ փաթեթավորման պարագաներ (եռաշերտ)			
2)	Լաբորատոր նմուշի փոխադրման պատասխանատուներն անցե՞լ են արդյոք դասընթացներ՝ կենսաբանական ախտաճին ազդակների փաթեթավորման և փոխադրման վերաբերյալ			
	<i>Եթե «Այո» կամ «Մասամբ», ապա</i>			
10	Անցել են դասընթացներ՝ ազգային պահանջների կանոնակարգման վերաբերյալ			

4. Մոդուլ 3՝ Սարքեր

(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)

1. Սարքավորումների գույքագրումը				
1	Արդյո՞ք գոյություն ունի սարքավորումների գույքագրում			
3	Եթե «այո» կամ «Մասնակիորեն», ապա տվյալ ձևաթղթում (բլանկի մեջ) արդյո՞ք դաշտեր կան հետևյալ տվյալների լրացման համար			
1)	Սարքավորման անվանումը			
2)	Գործարանային համարը			
3)	Արտադրող ընկերության կամ (տեղական մատակարարի) անունը և կոնտակտային տվյալները			
4)	Ձեռքբերման ամսաթիվը			
5)	Առաջին անգամ շահագործելու ամսաթիվը			
6)	Տեղակայումը լաբորատորիայում			
7)	Կարգավիճակը (նոր է թե՞ օգտագործված)			

8)	Տեխսպասարկման ուղղությամբ իրականացված աշխատանքները			
9)	Անսարքությունն ու վերանորոգումը			
10)	Տվյալ միավոր սարքի պատասխանատուն			
2. ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ, ՏՐԱՄԱԶԱՓԱՐԿՈՒՄԸ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ				
1.	Արդյո՞ք սարքը պահպանվում է անվտանգ և աշխատանքային վիճակում (ներառյալ էլեկտրաանվտանգությունը)			
2.	Արդյո՞ք անց են կացվում ամենօրյա մշտադիտարկումներ և ջերմաստիճանի գրանցումներ այն սարքավորումների համար, որոնք նախատեսված են որոշակի ջերմություն պահպանելու համար	○		
3.	Լաբորատորիայում կա՞րդյոք սարքի համար պատասխանատու (կառավարման, տեխնիկական սպասարկման ապահովման համար)			
4.	Արդյո՞ք գոյություն ունեն լաբորատորիայի և տեխնիկական սպասարկում և վերանորոգման աշխատանքներ մատուցող արտաքին ծառայությունների միջև կնքված պայմանագրեր			
5.	Սարքավորումների սպասարկման վերաբերյալ տեղեկություններն արդյո՞ք գրանցվում և օգտագործվում են			
6.	Արդյո՞ք առկա են սարքերի մեծամասնության համար շահագործման ձեռնարկները	○		

Կից ներկայացնել կիրառվող հիմնական սարքերի ցանկի վերաբերյալ տեղեկանք՝ ներառյալ քանակները:

5. Մոդուլ 4՝ Շենք և ենթակառուցվածք

(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)

1. Ենթակառուցվածք				
1	Լաբորատորիաների շենքային և ենթակառուցվածքային պայմանները			
1)	Պատեր, հատակ, տանիք			
2)	Պատուհաններ, դռներ			
3)	Լաբորատոր սեղաններ			
4)	Ջեռուցման, օդափոխման/ օդորակման համակարգեր			
5)	Լուսավորություն			
6)	Թափոնների հեռացում			
2. Աշխատանքային պայմաններ				
2	Լաբորատորիայում հաճախ են տեղի ունենում էլեկտրականության խափանումներ			
3	էլեկտրականության խափանումների դեպքերում կա՞ն արդյոք էլեկտրականության օժանդակ աղբյուրներ			
4	Առկա են արդյոք անխափան սնուցման սարքեր՝ միացված հիմնական սարքերին և սարքավորումներին			
5	Բավարարու՞մ է արդյոք ջրամատակարարման համակարգը, թե լինում են խափանումներ			
6	Որակի և կենսանվտանգության տեսանկյունից բավարա՞ր է արդյոք լաբորատոր աշխատանքային տարածքը			
7	Լաբորատոր աշխատանքային տարածքը գտնվու՞մ է արդյոք մաքուր և լավ վիճակում			
8	Առանձնացվա՞ծ են արդյոք լաբորատոր անհամատեղելի աշխատանքների տարածքները			
9	Ռեագենտների, ծախսանյութերի պահպանման համար կա՞ն արդյոք պատշաճ պայմաններ			

6. Մոդուլ 5՝ Մարդկային ռեսուրսներ

(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)

1. Անձնակազմ				
1ՃՔանակ				
1)	Ղեկավարներ/մենեջերներ/վարիչներ (բարձրագույն կրթություն)-վերահսկում են		X	
2)	Լաբորատոր մասնագետներ/տեխնիկներ/լաբորանտներ (բարձրագույն և միջնակարգ կրթություն)-կատարում են հետազոտություն		X	
3)	Օժանդակող բուժանձնակազմ - հետազոտություն չեն իրականացնում		X	
4)	Օժանդակող վարչական անձնակազմ (գործավար, օպերատոր և այլն)		X	
5)	Ֆլեբոտոմիստներ/բուժքույրեր		X	
6)	Այլ աշխատակիցներ		X	
7)	Այլնի դեպքում նշել ի՞նչ և որքա՞ն		X	
8)	Լաբորատորիայում աշխատող անձանց ընդհանուր թվաքանակ		X	
2Ճ	Արդյո՞ք բավարար է անձնակազմի ընդհանուր թվաքանակը աշխատանքներն իրականացնելու համար:			
«Ոչ» կամ «Մասամբ» պատասխանների դեպքում.				
1)	Ղեկավարների/մենեջերների/վարիչների անբավարարություն			
2)	Անբավարար տեխնիկական անձնակազմ			
3)	Անբավարար օժանդակող բուժանձնակազմ			
4)	Անբավարար օժանդակող վարչական անձնակազմ			
5)	Անբավարար ֆլեբոտոմիստների/բուժքույրերի քանակ			
6)	Անբավարար այլ աշխատակիցներ			

7)	Նշել թե՛ ո՞ր աշխատակիցների անբավարարություն է		<input checked="" type="checkbox"/>	
2. Որակավորում				
1.	Արդյո՞ք պահպանվում է աշխատակիցների որակավորման, վերապատրաստումների և հմտությունների վերաբերյալ տեղեկատվությունը		<input type="checkbox"/>	
2.	Արդյո՞ք անձնակազմն ունի անհրաժեշտ որակավորում և կոմպետենտություն՝ լաբորատոր աշխատանքներ իրականացնելու համար		<input type="checkbox"/>	
«Ոչ» կամ «Մասամբ» պատասխանների դեպքում.				
1)	Արդյո՞ք ղեկավարները, /մենեջերները/ վարիչներն ունեն համապատասխան որակավորում և կոմպետենտություն		<input type="checkbox"/>	
2)	Արդյո՞ք լաբորատոր մասնագետները /տեխնիկները/լաբորանտներն ունեն համապատասխան որակավորում և կոմպետենտություն		<input type="checkbox"/>	
3)	Արդյո՞ք օժանդակող լաբորատոր բուժանձնակազմն ունի համապատասխան որակավորում և կոմպետենտություն		<input type="checkbox"/>	
4)	Արդյո՞ք օժանդակող վարչական անձնակազմն ունի համապատասխան որակավորում և կոմպետենտություն		<input type="checkbox"/>	
5)	Արդյո՞ք Ֆլեբոտոմիստները/բուժքույրերը ունեն համապատասխան որակավորում և կոմպետենտություն:		<input type="checkbox"/>	
6)	Արդյո՞ք այլ աշխատակիցներն ունեն համապատասխան որակավորում և կոմպետենտություն		<input type="checkbox"/>	
7)	Նշել այլ աշխատակիցների որակավորման և կոմպետենտության մասին ևս		<input checked="" type="checkbox"/>	
3. Շարունակական կրթություն				
1.	Արդյո՞ք անձնակազմին տրվում է մասնագիտական ուսուցումը շարունակելու հնարավորություն (դասընթացներ, սեմինարներ, գիտաժողովներ)		<input type="checkbox"/>	
2.	Արդյո՞ք անձնակազմին տրվում է ուսուցումը շարունակելու հնարավորություն		<input type="checkbox"/>	

	լաբորատորիայում (գործնական ուսուցում աշխատատեղում, կլոր սեղաններ, քննարկումներ և այլն)			
--	--	--	--	--

7. Մոդուլ 6՝ Ռիսկերի կառավարում

(հնարավոր պատասխաններն են՝ Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ-դուրս է գալիս հաշվից, X- դաշտը լրացնելու անհրաժեշտություն չկա)

1. Կենսառիսկերի գնահատում և վերահսկում				
1.	Արդյո՞ք հատկորոշվել և փաստաթղթավորվել են վտանգները որոնք կապված են իրականացվող աշխատանքի հետ	<input type="radio"/>		
2.	Արդյո՞ք իրականացվել է կենսառիսկերի գնահատում և դասակարգում	<input type="radio"/>		
3.	Գործողությունների պլանում ներառված են արդյո՞ք կենսառիսկերի կառավարման գործընթացներ	<input type="radio"/>		
4.	Փաստաթղթավորված են արդյո՞ք կենսառիսկերի կառավարման գործընթացները	<input type="radio"/>		
2. Ամենօրյա աշխատանքում կենսառիսկերի կառավարման իրականացում				
1.	Արդյո՞ք պարտականություններն ու գործառույթները՝ կապված կենսառիսկերի կառավարման հետ, փաստաթղթավորված են	<input type="radio"/>		
2.	Նշանակված է արդյո՞ք ղեկավար կենսառիսկերի կառավարման համակարգի վերահսկման համար			
3.	Ձևավորված է արդյո՞ք կենսառիսկերի կառավարման հանձնաժողով			
4.	Նշանակվել է արդյո՞ք կենսառիսկերի կառավարման խորհրդատու (կամ կենսանվտանգության պատասխանատու)			
5.	Արդյո՞ք աշխատակիցները ենթարկվել են ամենամյա բուժզննման			
6.	Ստանու՞մ են արդյոք աշխատակիցները կանոնավոր ուսուցում կենսառիսկերի կառավարման վերաբերյալ	<input type="radio"/>		
7.	Արդյո՞ք իրականացվում են արդյունավետ մանրէազերծման և ախտահանման աշխատանքեր			
8.	Կատարվու՞մ է արդյոք թափոնների արդյունավետ հեռացում			

9.	Պատշաճ կերպով օգտագործվում են արդյոք անհատական պաշտպանության միջոցները, ներառյալ պաշտպանիչ արտահագուստը			
10.	Ապահովում է արդյո՞ք լաբորատորիայի կառուցվածքը աշխատանքի անվտանգությունը			

8. Մոդուլ՝ 7 COVID-19 Հետազոտման ներուժ և կարողություններ

Հնարավոր պատասխաններ (բացառությամբ այլ կարգավորումների): Այո՝ 1 բալ, Մասամբ՝ 2 բալ, Ոչ՝ 3բալ, Կիրառելի չէ՝ 4 բալ

Ստորև ներկայացված հարցերը վերաբերում են բացառապես COVID19 վիրուսի թեստավորմանը

	Լաբորատոր ներուժը COVID19 վիրուսի թեստավորման համար	Հավաքագրվող փաստաթղթեր	1; 2; 3; 4	Լրացնել բաց հարցերի պատասխանը/ները և/կամ տրամադրել ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն
1	Արդյո՞ք փաստաթղթավորված են COVID-19 նմուշների հավաքման հետ կապված հատուկ ընթացակարգերը և ապահովված է դրանց հասանելիությունը համապատասխան աշխատակիցների համար:	X		
2	Արդյո՞ք նմուշների վարման և COVID-19 վիրուսի թեստավորման ընթացակարգերը (ՌԼԹ անջատում, ՊՇՌ, շճաբանություն և այլն) առկա են գրավոր տեսքով և հասանելի են աշխատակիցներին:	X		
3	Արդյո՞ք լաբորատորիայում առկա են COVID-19-ի թեստավորման համար օգտագործվող ստանդարտների և այլ փաստաթղթերի (օր.՝ նորմեր, ուղեցույցներ, գործիքներ, ձեռնարկներ, թեստ հավաքածուների ներդիրներ և այլ) վերջին տարբերակները:	X		
4	Արդյո՞ք ներդրված են COVID-19 թեստավորման արդյունքների ներկայացման ընթացակարգեր:	X		
5	Լաբորատորիայում իրականացվել և փաստաթղթավորվել է արդյո՞ք COVID-19 վիրուսի թեստավորման համար իրականացվող ընթացակարգերի հետ կապված ռիսկերի գնահատումը:	X		
6	Առկա՞ են արդյոք գրված կենսաբանական անվտանգության ընթացակարգեր COVID-19 նկատմամբ թեստավորված նմուշների պահպանման և վարման վերաբերյալ:	X		

7	Առկա՞ են արդյոք անձնական անվտանգության պատշաճ միջոցներ COVID-19 վիրուսի նկատմամբ նմուշների վարման և թեստավորման համար:			
8	Արդյո՞ք աշխատակիցները վերապատրաստվել են COVID-19 վիրուսի թեստավորման անցկացման ուղղությամբ:			
9	Եթե այո, ապա իչպիսի՞ տեխնոլոգիայով և ինչպիսի՞ հարթակի հիման վրա:			
10	Արդյո՞ք պատշաճ կերպով իրականացվում է COVID-19 վիրուսի թեստավորման համար օգտագործվող սարքավորումների պահպանումը:	X		
11	Առկա՞ է արդյոք վալիդացված կենսաբանական անվտանգության պահարան (ԿԱՊ)՝ իրականացնելու համար նմուշների նախնական մշակումը (նախքան վիրուսի ապակտիվացումը):			
12	Առկա՞ են արդյոք COVID-19 թեստավորման համար անհրաժեշտ ռեագենտները:			
13	Արդյո՞ք COVID-19 թեստավորման համար անհրաժեշտ ռեագենտները պիտանիության ժամկետի մեջ են:			
14	Առկա՞ են արդյոք առանձնակցված սարքավորումներ յուրաքանչյուր ՊՇՌ սենյակի համար (պիպետներ և պիպետի ծայրակալներ, միկրոֆուգ, վորտեքս և այլն):			
Թեստավորման կարողություններ				
15	Արդյո՞ք ներքին որակի վերահսկման (ՆՈՎ) նմուշները ներառված են COVID-19 թեստավորման իրականացման ժամանակ:	X		
16	Գոյություն ունի արդյո՞ք սահմանված ընթացակարգ ՆՈՎ արդյունքների գրանցման և ներկայացման համար ոչ պատշաճ աշխատելու դեպքում ուղղիչ գործողություններ իրականացնելու նպատակով:	X		
17	ՆՈՎ արդյունքների ընդունելի չլինելու դեպքում իրականացվում են արդյո՞ք ուղղիչ գործողություններ	X		
18	Արդյո՞ք լաբորատորիան մասնակցում է COVID-19 թեստերի համար որակի արտաքին հսկողության (ՈԱՀ) միջոցառումներին:	X		
19	Առկա՞ է արդյոք ՈԱՀ-ն արդյունքների գրանցման և գնահատման համակարգ:	X		
20	ՈԱՀ արդյունքների ընդունելի չլինելու դեպքում իրականացվում են արդյո՞ք ուղղիչ գործողություններ:	X		
21	Արդյո՞ք լաբորատորիան մասնակցում է COVID-19 ազգային (կամ ԱՀԿ) ռեֆերենս լաբորատորիայի կողմից արդյունքների հաստատման նպատակով նմուշներն ուղարկելու գործընթացին			

22	Արդյո՞ք աշխատակիցները վերապատրաստված են COVID-19 վիրուսի ՊՇՌ արդյունքների հետ կապված խնդիրների հայտնաբերման և վերացման, ինչպես նաև հետազոտման իրականացման փոփոխության ուղղությամբ:			
----	--	--	--	--

Հավելված 3

Առողջապահության նախարարի
2020 թվականի հուլիսի 16 – ի N 2322 - Լ հրամանի

ԿԱԶՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՏԻՎՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ

ՀՀ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն, պաշտոն
1.	Լիլիթ Ավետիսյան	ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (նախագահ)

2.	Հասմիկ Հարությունյան	ԱՆ Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի ղեկավար
3.	Էդուարդ Կաբասակալյան	ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Ազգային ռեֆերենս լաբորատորիայի ղեկավար
4.	Կարո Փալայան	ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ակուստիկայի, ճարտարագիտատեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պատասխանատու

Հավելված 4

Առողջապահության նախարարի
2020 թվականի հուլիսի 16-ի N 2322 - Ա հրամանի

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԵԹՈԴՈՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԹՎԻ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆՍԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ՝ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ

1. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով ՊՇՌ հետազոտություններ իրականացվում են տեխնիկական բավարար հագեցվածություն, բավարար թվով և որակավորմամբ մասնագետներ, ինչպես նաև կենսանվտանգության պատշաճ համակարգ ունեցող լաբորատորիաներում (այսուհետ՝ ՊՇՌ լաբորատորիաներ):

2. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով ՊՇՌ հետազոտություններ իրականացնելու համար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպությունները (այսուհետ՝ Դիմող կազմակերպություն), որոնք ներառված չեն Առողջապահության նախարարության կազմում, գրավոր դիմում են Առողջապահության նախարարին՝ ներկայացնելով դիմում-տեղեկանք (հիմնավորում)՝ լաբորատորիայի տեխնիկական բավարար հագեցվածության, բավարար թվով և որակավորմամբ մասնագետների, ինչպես նաև կենսասանվտանգության պատշաճ համակարգի առկայության հավաստմամբ:

3. Դիմում-տեղեկանքի հիմքով՝ գնահատող մասնագիտական խումբը 3 աշխատանքային օրվա ընթացքում այցելում է Դիմող կազմակերպության գործունեության իրականացման վայր՝ գնահատման աշխատանքներ իրականացնելու համար:

4. ՊՇՌ լաբորատորիաների տեխնիկական բավարար հագեցվածությունը, բավարար թվով և որակավորմամբ մասնագետների, ինչպես նաև կենսասանվտանգության պատշաճ համակարգի առկայությունը գնահատվում է սույն հրամանի Հավելված 2-ով հաստատված գնահատման հարցաշարով:

5. Գնահատման արդյունքների հիման վրա 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է մասնագիտական եզրակացությունը և ներկայացվում՝ Առողջապահության նախարարություն:

6. Մասնագիտական եզրակացության հիման վրա, Դիմող կազմակերպությունը Առողջապահության նախարարության կողմից ծանուցվում է ՊՇՌ հետազոտությունների իրականացման թույլատրման/մերժման մասին:

7. ՊՇՌ լաբորատորիաների տեխնիկական բավարար հագեցվածություն, բավարար թվով և որակավորմամբ մասնագետներ, ինչպես նաև կենսասանվտանգության պատշաճ համակարգ ունեցող լաբորատորիաներն ընդգրկվում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ՊՇՌ մեթոդով ախտորոշման գործընթացում: